



EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME

Խնդրում ենք ի նկատի ունենալ, որ դիմումի ձևաթուղթը ճիշտ կաշիատի միայն Adobe Reader ծրագրային փաթեթի 9-րդ և ավելի բարձր տարբերակներով (ներբեռնումը հնարավոր է www.adobe.com կայքից):
Խնդրում ենք ձևաթղթի օրինակը պահպանել Ձեր համակարգչում մինչև Adobe Reader ծրագրի օգնությամբ այն լրացնելը, այնուհետև տպել այն և փոստով ուղարկել Դատարան:

ARM - 2022/2

Դիմումի ձևաթուղթ

Դիմումի սույն ձևաթղթի մասին

Դիմումի սույն ձևաթուղթը պաշտոնական իրավական փաստաթուղթ է և կարող է ազդել Ձեր իրավունքների և պարտականությունների վրա: Խնդրում ենք հետևել «Օանդաբազմություն՝ դիմումի ձևաթուղթը լրացնելու մասին» ուղեցույցում նշված ցուցումներին: Համոզվեք, որ լրացրել եք Ձեր իրավիճակին առնչվող բոլոր բաժինները և ներկայացրեք բոլոր համապատասխան տեղեկությունները:

Գծիկավոր կողով պիտակները

Եթե Դուք ՄԻԵԴ-ից արդեն ստացել եք գծիկավոր կողով պիտակներ, ապա խնդրում ենք ստորև փակցնել այդ պիտակներից մեկը:

Ուշադրություն՝ թերի լրացված դիմումի ձևաթուղթն ընդունման ենթակա չէ (տե՛ս Դատարանի կանոնակարգի 47-րդ հոդվածը): Մասնավորապես, Ձեր ուշադրությունը հրավիրվում է 47-րդ հոդվածի 2-րդ կետի «ա» ենթակետին, համաձայն որի՝ փաստերի, գանգատների և ընդունելիության պայմանների բավարարման

վերաբերյալ տեղեկատվության հավերժ շարադրանքը՝ ՊԵՏՔ-Է պարտադիր լրացվի դիմումի ձևաթղթի համապատասխան բաժիններում: Դատարանը պետք է կարողանա որոշել դիմումի էությունն ու շրջանակները լրացված ձևաթղթի հիման վրա՝ առանց կզված ռոկել այլ նույնիանորդառնալու:

Դիմումին տրված համարը

Եթե այս գանգատների առնչությամբ Դուք Դատարանից արդեն տեղեկացվել եք Ձեր դիմումին տրված համարի մասին, ապա խնդրում ենք ստորև նշել այն:

A. Դիմողը

A.1. Անհատ դիմող

Սույն բաժինը վերաբերում է միայն ֆիզիկական անձ հանդիսացող դիմողներին: Եթե դիմողը կազմակերպություն է, ապա խնդրում ենք անցնել A.2 բաժին:

1. Ազգանուն

2. Անուն (հայրանուն)

3. Օնոմոնոմի ամսաթիվ

օր.՝
31/12/1960

օր. ամիս տարի

4. Օնոմոնոմի անուն

5. Քաղաքացիություն

6. Հասցե

7. Հեռախոս (ներառյալ միջազգային կոդը)

8. Էլ. փոստ (եթե այդպիսին կա)

9. Սեռ

արական իգական

A.2. Կազմակերպություն

Սույն բաժինը պետք է լրացվի միայն այն դեպքում, երբ դիմողը հանդիսանում է ընկերություն, ՀԿ, արհմիություն կամ այլ իրավաբանական անձ: Այս դեպքում խնդրում ենք լրացնել նաև D.1 բաժինը:

10. Անվանում

11. Գրանցման համար (եթե այդպիսին կա)

12. Գրանցման ամսաթիվ (եթե այդպիսին կա)

օր.՝
27/09/2012

օր. ամիս տարի

13. Գործունեության ոլորտ

14. Գրանցման հասցե

15. Հեռախոս (ներառյալ միջազգային կոդը)

16. Էլ. փոստ

B. Պետությունը (պետությունները), որի (որոնց) դեմ ներկայացվում է դիմումը

17. Նշել այն պետության (պետությունների) անվան դիմաց, որի (որոնց) դեմ ներկայացվում է դիմումը:

- | | |
|--|---|
| <input type="checkbox"/> ALB - Ալբանիա | <input type="checkbox"/> ITA - Իտալիա |
| <input type="checkbox"/> AND - Անդորրա | <input type="checkbox"/> LIE - Լիխտենշտեյն |
| <input checked="" type="checkbox"/> ARM - Հայաստան | <input type="checkbox"/> LTU - Լիտվա |
| <input type="checkbox"/> AUT - Ավստրիա | <input type="checkbox"/> LUX - Լյուքսեմբուրգ |
| <input type="checkbox"/> AZE - Ադրբեջան | <input type="checkbox"/> LVA - Մոնակո |
| <input type="checkbox"/> BEL - Բելգիա | <input type="checkbox"/> MCO - Մոնակո |
| <input type="checkbox"/> BGR - Բուլղարիա | <input type="checkbox"/> MDA - Մոլդովայի Հանրապետություն |
| <input type="checkbox"/> BIH - Բոսնիա և Հերցեգովինա | <input type="checkbox"/> MKD - Հյուսիսային Մակեդոնիա |
| <input type="checkbox"/> CHE - Շվեյցարիա | <input type="checkbox"/> MLT - Մալթա |
| <input type="checkbox"/> CYP - Կիպրոս | <input type="checkbox"/> MNE - Մոնտենեգրո |
| <input type="checkbox"/> CZE - Չեխիայի Հանրապետություն | <input type="checkbox"/> NLD - Նիդերլանդներ |
| <input type="checkbox"/> DEU - Գերմանիա | <input type="checkbox"/> NOR - Նորվեգիա |
| <input type="checkbox"/> DNK - Դանիա | <input type="checkbox"/> POL - Լեհաստան |
| <input type="checkbox"/> ESP - Իսպանիա | <input type="checkbox"/> PRT - Պորտուգալիա |
| <input type="checkbox"/> EST - Էստոնիա | <input type="checkbox"/> ROU - Ռումինիա |
| <input type="checkbox"/> FIN - Ֆինլանդիա | <input type="checkbox"/> RUS - Ռուսաստանի Դաշնություն* |
| <input type="checkbox"/> FRA - Ֆրանսիա | <input type="checkbox"/> SMR - Սան Մարինո |
| <input type="checkbox"/> GBR - Միացյալ Թագավորություն | <input type="checkbox"/> SRB - Սերբիա |
| <input type="checkbox"/> GEO - Վրաստան | <input type="checkbox"/> SVK - Սլովակիայի Հանրապետություն |
| <input type="checkbox"/> GRC - Հունաստան | <input type="checkbox"/> SVN - Սլովենիա |
| <input type="checkbox"/> HRV - Խորվաթիա | <input type="checkbox"/> SWE - Շվեդիա |
| <input type="checkbox"/> HUN - Հունաստան | <input type="checkbox"/> TUR - Թուրքիա |
| <input type="checkbox"/> IRL - Իռլանդիա | <input type="checkbox"/> UKR - Ուկրաինա |
| <input type="checkbox"/> ISL - Իսլանդիա | |

* 2022 թ. սեպտեմբերի 16-ին Ռուսաստանի Դաշնությունը դադարեց Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիային մասնակից լինելուց:

C. Անհատ դիմողի ներկայացուցիչը (ներկայացուցիչները)

Այս փուլում պարտադիր չէ, որ անհատ դիմողը ներկայացված լինի փաստաբանի կողմից: Եթե դիմողը ներկայացուցիչ չունի, ապա խնդրում ենք միանգամից անցնել E բաժին:

Անհատ դիմողի անունից Դատարան դիմող, սակայն փաստաբանի որակավորում չունեցող ներկայացուցիչը (օր.՝ դիմողի ազգականը, ընկերը կամ խնամակալը) պետք է լրացնի C.1 բաժինը, այնինչ փաստաբանի որակավորում ունեցող ներկայացուցիչը պետք է լրացնի C.2 բաժինը: Երկու դեպքում էլ անհրաժեշտ է անպայման լրացնել C.3 բաժինը:

C.1. Փաստաբանի որակավորում չունեցող ներկայացուցիչ

18. Կարգավիճակը/կապը/դիրքը

19. Ազգանուն

20. Անուն (հայրանուն)

21. Քաղաքացիություն

22. Հասցե

23. Հեռախոս (ներառյալ միջազգային կոդը)

24. Ֆաքս

25. Էլ. փոստ

C.2. Փաստաբանի որակավորում ունեցող ներկայացուցիչ

26. Ազգանուն

27. Անուն (հայրանուն)

28. Քաղաքացիություն

29. Հասցե

ՀՀ, ք. Երևան, Հս/Ամտ Վ-3 թաղ. տ. 106

30. Հեռախոս (ներառյալ միջազգային կոդը)

31. Ֆաքս

32. Էլ. փոստ

C.3. Լիազորագիր

Դիմողը պետք է լիազորի իր ներկայացուցչին հանդես գալ իր անունից՝ ստորագրելով ներքոնշյալ 33-րդ կետում: Նշանակված Սույնով լիազորում եմ վերոնշյալ անձին՝ ներկայացնելու իմ շահերը Մարդու իրավունքների եվրոպական դատարանում Կոնվենցիայի 33. Դիմողի ստորագրությունը սցված իմ դիմումի հիման վրա հարուցված 34. Ամսաթիվը:

օր.՝ 27/09/2015

օր ամիս տարի

Սույնով ստանձնում եմ Մարդու իրավունքների եվրոպական դատարանում Կոնվենցիայի 34-րդ հոդվածի ներքո ներկայացված դիմումի 35. Ներկայացուցչի ստորագրությունը դիմողի շահերը ներկայացնելու լի 36. Ամսաթիվը

օր.՝ 27/09/2015

օր ամիս տարի

37. Էլ. փոստի հասցե՝ eComms համակարգից օգտվելու համար (եթե ներկայացուցիչն արդեն օգտվում է eComms համակարգից, ապա հարկավոր է փոստից eComms համակարգում արդեն գրացված էլ. փոստի հասցեն):

Լրացնելով սույն բաժինը՝ Դուք հաստատում եք Ձեր համաձայնությունը eComms համակարգից օգտվելու համար:

D. Դիմումատու կազմակերպության ներկայացուցիչը (ներկայացուցիչները)

Եթե դիմողը կազմակերպություն է, ապա Դատարանում դրա շահերը պետք է ներկայացնի այն անձը, ով իրավասու է հանդես գալ տվյալ կազմակերպության անունից (օր.՝ համապատասխան լիազորություն ունեցող գործադիր տնօրենը կամ այլ պաշտոնատար անձ):

Ներկայացուցիչի տվյալները պետք է լրացվեն D.1 բաժնում:

Եթե ներկայացուցիչը կազմակերպության անունից դիմում ներկայացնելու համար փաստաբան է նշանակում, ապա հարկավոր է նաև լրացնել D.2 և D.3 բաժինները:

D.1. Կազմակերպության պաշտոնական ներկայացուցիչ

38. Կարգավիճակը/կապը/դիրքը (խնդրում ենք տրամադրել համապատասխան ապացույց)

39. Ազգանուն

40. Անուն (հայրանուն)

41. Քաղաքացիություն

42. Հասցե

43. Հեռախոս (ներառյալ միջազգային կոդը)

44. Ֆաքս

45. Էլ. փոստ

D.2. Փաստաբանի որակավորում ունեցող ներկայացուցիչ

46. Ազգանուն

47. Անուն (հայրանուն)

48. Քաղաքացիություն

49. Հասցե

50. Հեռախոս (ներառյալ միջազգային կոդը)

51. Ֆաքս

52. Էլ. փոստ

D.3. Լիազորագրի

Դիմումատու կազմակերպության ներկայացուցիչը պետք է լիազորի իր կողմից նշանակված փաստաբանին հանդես գալ կազմակերպության անունից՝ ստորագրելով ներքոնշյալ 53-րդ կետում: Նշանակված փաստաբանն իր հերթին պետք է հաստատի Սույնով լիազորում եմ վերոհիշյալ D.2 բաժնում նշված անձին՝ ներկայացնելու դիմումատու կազմակերպության շահերը Մարդու 53. Կազմակերպության պաշտոնական ներկայացուցչի յի 34-րդ հոդված 54. Ամսաթիվը, այսպիսով դիմումի հիման վրա հարուցված

ստորագրությունը

օր.՝ 27/09/2015

օր ամիս տարի

Սույնով ստանձնում եմ Մարդու իրավունքների եվրոպական դատարանում Կոնվենցիայի 34-րդ հոդվածի ներքո ներկայացված դիմումի 55. Փաստաբանի ստորագրությունը դիմումատու կազմակերպության 56. Ամսաթիվը, այսպիսով լիազորությունը:

օր.՝ 27/09/2015

օր ամիս տարի

57. Էլ. փոստի հասցե՝ eComms համակարգից օգտվելու համար (եթե ներկայացուցիչն արդեն օգտվում է eComms համակարգից, ապա հարկավոր է լրացնել eComms համակարգում արդեն գրացված էլ. փոստի հասցեն)

Լրացնելով սույն բաժինը՝ Դուք հաստատում եք Ձեր համաձայնությունը eComms համակարգից օգտվելու համար:

Դիմումի առարկան

Դիմումի ձևաթղթի այս մասում (E, F և G բաժիններում) պետք է շարադրել գործի փաստերի, գանգատների, ինչպես նաև Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված ներպետական իրավական պաշտպանության միջոցների սպառման և չորսամսյա ժամկետի պահպանման պահանջների բավարարման վերաբերյալ ամբողջ տեղեկատվությունը: Այս բաժինները դատարկ թողնելը կամ դրանցում պարզապես կից հավելվածներին հղումներ կատարելն անընդունելի է: Տե՛ս Դատարանի կանոնակարգի 47-րդ հոդվածի 2-րդ կետը, ինչպես նաև «Դիմումի ներկայացումը Դատարան» և «Ծանոթագրություն` դիմումի ձևաթուղթը լրացնելու մասին» գործնական

Ե. Փաստերի շարադրանքը

58.
 - 1) 2024թ. նոյեմբերի 27-ին թիվ 012/Դ-24 գրությամբ դիմել եմ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարար Արփիինե Սարգսյանին և ՀՀ Տավուշի մարզի դատախազ Արմեն Մուրադյանին՝ Տավուշի մարզում ապօրինի սահմանազատում իրականացնելու հիմքով քրեական վարույթ նախաձեռնելու և մեղավոր անձանց հանդեպ հանրային քրեական հետապնդում իրականացնելու խնդրանքով:
 - 1.1) 2024թ. դեկտեմբերի 20-ին ստացել եմ Տավուշի մարզային քննչական վարչության քննիչ Է. Դավթյանի՝ «քրեական վարույթ չնախաձեռնելու մասին» 12.12.2024թ. գրավոր տեղեկացումը, համաձայն որի իմ կողմից ներկայացված հաղորդումը չի համապատասխանում ՀՀ քր.դատ.օր. 173 հոդ. 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված պայմաններին, քանի որ իմ՝ «առերևույթ հանցանքի մասին հաղորդման և կից փաստաթղթերի մեջ բացակայում են առերևույթ հանցանքի առկայության մասին վկայող բավարար տարրեր»:
 - 1.2) 2024թ. դեկտեմբերի 21-ին թիվ 016/Դ-24 գրությամբ բողոք եմ ներկայացրել Տավուշի մարզի դատախազ Ա. Մուրադյանին և միջնորդել. «վերացնել Տավուշի մարզային քննչական վարչության քննիչ Է. Դավթյանի՝ «քրեական վարույթ չնախաձեռնելու մասին» 12.12.2024թ. գրավոր տեղեկացումը և քննիչին հանձնարարել անհապաղ նախաձեռնել քրեական վարույթ և սկսել նախաքննություն, ինչպես նաև՝ որոշում կայացնել հսկող դատախազին փոխելու» վերաբերյալ:
 - 1.3) 2025թ. հունվարի 4-ին ստացել եմ Տավուշի մարզի դատախազի տեղակալ Հ. Աղասարյանի 27.12.2024թ. թիվ 67/5-3602-24 գրությունը, որով ներկայացվել է մարզի դատախազ, արդարադատության երրորդ դասի խորհրդական Ա. Մուրադյանի «բողոքը քննության առնելու մասին» 26 դեկտեմբերի 2024թ. որոշումը: Համաձայն այդ որոշման՝ Հ. Բաղդասարյանի կողմից ներկայացված առերևույթ հանցանքի մասին հաղորդմամբ և կից փաստաթղթերով «չի փաստվել այնպիսի դեպք, գործողություն կամ անգործություն, որին ողջամտորեն կարող էր տրվել ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված որևէ արարքին համապատասխանելու նախնական իրավական գնահատական, որպիսի պայմաններում վարույթի հանրային մասնակից քննիչի վարույթային ակտն անօրինական կամ անհիմն գնահատելու, հետևաբար նաև հսկող դատախազին քրեական վարույթ նախաձեռնելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու հանձնարարություն տալու հիմքերը բացակայում են»:
 - Ուստի՝ մարզի դատախազը որոշել է «քննիչ Է. Դավթյանի քրեական վարույթ նախաձեռնելուց հրաժարվելու վարույթային ակտի դեմ Հ. Բաղդասարյանի կողմից ներկայացված բողոքը մերժել»:
 - 2) 2025թ. հունվարի 15-ին ՀՀ քննչական կոմիտեի Տավուշի մարզային քննչական կոմիտեի քննիչ Է. Դավթյանի կողմից քրեական վարույթ նախաձեռնելուց հրաժարվելու և իրավասու դատախազին ուղղված բողոքը մերժելու մասին Տավուշի մարզի դատախազ Ա. Մուրադյանի 2024թ. դեկտեմբերի 26-ի որոշման դեմ բողոք եմ ներկայացրել Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարան:
 - 2.1) 2025թ. փետրվարի 6-ին դատավոր Նարեկ Բաղդասարյանի կողմից որոշում է կայացվել բողոքաբեր Հ. Բաղդասարյանի բողոքի կապակցությամբ թիվ ՏԴ/0002/11/25 գործով մինչդատական ակտի վիճարկման վարույթ հարուցելու և այն գրավոր ընթացակարգով իրականացնելու մասին:
 - 2.2) 2025թ. փետրվարի 21-ին Դատարանը մերժել է իմ բողոքը, սակայն որոշումն ուղարկել է 4 ամիս անց՝ 26.06.2025թ., ես այն ստացել եմ 01.07.2025թ.
 - 3) 2025թ. հուլիսի 10-ին Դատարանի որոշումը բողոքարկել եմ ՀՀ վերաքննիչ քրեական դատարան:
 - 3.1) 2025թ. հուլիսի 21-ին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը՝ Ադրիինե Ղուկասյանի նախագահությամբ որոշում է կայացրել հատուկ վերանայման բողոքը վարույթ ընդունելու և դատական վարույթը գրավոր ընթացակարգով իրականացնելու մասին:
 - 3.2) 2025թ. հուլիսի 31-ին Վերաքննիչ դատարանը բողոքս մերժել է: Որոշումն ուղարկվել է 18.08.2025թ., իսկ ես այն ստացել եմ 40 օր անց՝ 11.09.2025թ.:
 - 4) 2025թ. սեպտեմբերի 25-ին Վերաքննիչ դատարանի որոշումը բողոքարկել եմ ՀՀ վճռաբեկ դատարան:
 - 4.1) 2025թ. նոյեմբերի 17-ին Վճռաբեկ դատարանը Հատուկ վերանայման վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժել է: Որոշումն ուղարկվել է 26.11.2025թ., այն ստացել եմ 28.11.2025թ.:
 - 5) Փաստորեն, ՀՀ դատարանները հաստատել են Տավուշի մարզի դատախազության և քննչական վարչության ապօրինությունները ու գտել են, որ նրանք ճիշտ են արել, որ ակնհայտ հանցագործությունները չեն տեսել, հալածակ դեպքում կհակադրվեին Հայաստանի ժողովրդին պատկանող իշխանությունը ուզուրպագրած

Փաստերի շարադրանքը (շարունակություն)

59.

6) 2020թ. սեպտեմբերի 27-ին Ադրբեջանը Ռուսաստանի համաձայնությամբ և, ամենայն հավանականությամբ, Հայաստանի հետ պայմանավորվելով հարձակվեց ՀՀ մարզ Արցախի վրա: Հայաստանի կողմից թշնամուն ռեալ հակահարված չտալն ու պատերազմական դրություն չհայտարարելը (հայտարարվել է միայն ռազմական դրություն, սակայն գորահավաք չի անցկացվել) խոսում է այդ պայմանավորվածության մասին:

6.1) 2020թ. նոյեմբերի 9-ին հայտարարվեց, որ Հայաստանը ստորագրել է 9 կետից բաղկացած կապիտուլյացիա: Հեռուստատեսությամբ ցուցադրվող կադրերում Պուտինն ու Ալիևը ստորագրում էին (Պուտինը նույնիսկ հայտարարեց, թե ինչու պետք է կարդալ ստորագրվող հայտարարությունը, երբ այն ինքն էր գրել), իսկ Հայաստանի վարչապետը բացակայում էր: Եթե, նույնիսկ, նա ստորագրել է այդ հայտարարությունը, ուրեմն պարտավոր էր այն ներկայացնել ՀՀ սահմանադրական դատարան ու ՀՀ Ազգային Ժողով, ինչը չի արել:

6.2) Հայտարարության 2-րդ կետում նշված էր. «Հայկական կողմից Ղազախի շրջանում պահվող տարածքներ», ինչը ենթադրում էր, որ Հայաստանը, Արցախից հետո այլ տարածքներ էլ է զիջելու Ադրբեջանին

6.3) 2023թ. սեպտեմբերի 19-23-ը Արցախը 9 ամիս գտնվելով շրջափակման մեջ, ամբողջությամբ հայաթափվեց:

7) 2024թ. Տավուշի մարզում տեղի է ունեցավ սահմանազատում, որն իրականացվեց ՀՀ Սահմանադրության և օրենքների խախտմամբ: Այսպես.

7.1) «Պետական սահմանի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն Հայաստանի Հանրապետության պետական սահմանը որոշվում է ոչ թե պայմանավորվածություններով, կամ, ինչպես ՀՀ պաշտոնյաներն են ասում, «միջազգայնորեն ճանաչված սահմաններով», այլ ՀՀ միջազգային պայմանագրերով և ՀՀ օրենքով:

7.2) ԽՍՀՄ-ից դուրս գալուց հետո Հայաստանն ու Ադրբեջանը երբեք էլ սահմանազատում (delimitation) եւ սահմանանշում (demarcation) չեն իրականացրել (ինչպես եւ երկուսն էլ չեն ավարտել այդ գործընթացը Վրաստանի հետ), իսկ այդ պարագայում «միջազգայնորեն ճանաչված սահմանների» մասին խոսելն իսկ անհեթեթություն է:

7.3) Եւ ընդհանրապես, միջազգային իրավունքում գոյություն չունի նման հասկացություն. սահմանները որոշում են սահմանակից պետությունները՝ փոխադարձ համաձայնությամբ, համատեղ պետական հանձնաժողովների միջոցով, իսկ վեճերի դեպքում՝ 3-րդ կողմի իրավարարությամբ (arbitration):

7.4) Իսկ նույն օրենքի 2-րդ հոդվածի համաձայն. պետական սահմանը տեղորոշելիս և փոփոխելիս, սահմանակից պետությունների հետ հարաբերությունները, ինչպես նաև սահմանամերձ շրջաններում և միջազգային հաղորդակցության ուղիներում իրավահարաբերությունները կարգավորելիս Հայաստանի Հանրապետությունը պետք է առաջնորդվի ՀՀ տարածքային ամբողջականության պաշտպանության և անվտանգության ու խաղաղության ապահովման սկզբունքներով:

7.4.1) Բայց, ինչպես կյանքն է ցույց տալիս, ՀՀ իշխանությունը բացի, այսպես կոչված, «խաղաղության ծրագրից», մնացած սկզբունքները ռոտահարել է, և դրա համար որևէ պաշտոնյա պատասխանատվության չի կանչվել:

7.5) Եւ, նույն օրենքի 5-րդ հոդվածի համաձայն. ՀՀ միջազգային պայմանագրերի հիման վրա, պետական սահմանի ստուգման արդյունքում, պետական սահմանի փոփոխում պարունակող, պետական սահմանը տեղորոշող փաստաթղթերը գործողության մեջ են դրվում ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

7.6) Մինչդեռ, Հայաստանի սահմանները որոշվել է Ալիևի թելադրմամբ, քանի որ նոյեմբերի 9-ի հայտարարությունը միջազգային պայմանագիր չէ, բացի այդ չի պահպանվել ՀՀ օրենսդրությունը:

8) «Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին» Կոնվենցիայի 14-րդ հոդվածի 1-ին մասի դ) կետի համաձայն. 1. Իր համար պայմանագիրը պարտադիր լինելու մասին պետության համաձայնությունն արտահայտվում է վավերացման միջոցով, եթե դ) վավերացման պայմանով պայմանագիր ստորագրելու մասին պետության մտադրությունը բխում է նրա ներկայացուցչի լիազորություններից կամ արտահայտվել է բանակցությունների ընթացքում: Այդ հայտարարության վավերացում չի եղել:

9) ՀՀ Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն. Սահմանադրական դատարանը Սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով՝ 3) մինչև միջազգային պայմանագրի վավերացումը որոշում է դրանում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը Սահմանադրությանը:

10) ՀՀ Սահմանադրության 116-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ 1. Ազգային ժողովը վավերացնում, կասեցնում կամ չեղյալ է հայտարարում այն միջազգային պայմանագրերը՝ 2) որոնք ունեն քաղաքական կամ ռազմական բնույթ:

11) «Միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ստորագրած կամ միանալու ենթակա միջազգային պայմանագիրը Հայաստանի Հանրապետության համար պարտադիր իրավաբանական ուժ է ստանում անհրաժեշտ ներպետական ընթացակարգերն ավարտելուց հետո Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից վավերացվելու կամ Հանրապետության նախագահի կողմից հաստատվելու միջոցով:

Փաստերի շարադրանքը (շարունակություն)

60. Հանրապետության տարածքի փոփոխությանը վերաբերող հարցերը լուծվում են հանրաքվեների միջոցով:

13) Իսկ «Հանրաքվեի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի համաձայն՝ ... Հայաստանի Հանրապետության ինքնիշխան իրավունքների իրականացման սահմանափակումներ նախատեսող միջազգային պայմանագրեր կնքելը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքի փոփոխությանը վերաբերող հարցով հանրաքվե անցկացնելու վերաբերյալ առաջարկությունը Կառավարությունը ներկայացնում է Ազգային ժողով:

13.1) Կառավարությունը դա չի արել, ինչով էլ խախտել է ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածը, այն է՝ Պետա-կան և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

14) Այսպիսով՝ ինչ-որ մեկի (անգամ՝ վարչապետի) ստորագրած թուղթը չի կարող միջազգային պայմանագիր կոչվել և Հայաստանի Հանրապետության համար պարտադիր իրավաբանական ուժ ունենալ, եթե այն չի անցել անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը և չի վավերացվել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կամ չի հաստատվել Հանրապետության նախագահի կողմից: Ավելին, ըստ Սահմանադրության 3-րդ հոդվածի՝ դա համարվում է իշխանության յուրացում, ինչն էլ իր հերթին հանցագործություն է:

14.1) Այն, որ պետական սահմանը ետ է քաշվել միջազգային իրավունքի և ներպետական օրենսդրության խախտմամբ, 10.10.2023թ. Հ1-ով, ակամայից, խոստովանել է Հայաստանի վարչապետի աթոռը զբաղեցնող «թիվ մեկ պատասխանատուն», ասելով. «մենք այդ հարցի լուծումն առաջարկել ենք, ասել ենք, որ եթե որոշենք, թե որն է դելիմիտացիայի քարտեզը, այդ սահմանի գծից գործերը հայելային հետ քաշենք»: Այսինքն՝ դեռ սահմանը չորոշած ՀՀ պաշտոնյաները հայտարարում են, թե այդ տարածքները Հայկական չեն:

14.2) Հայտնում եմ, որ սահմանագատումն իրականացվել է 2024թ. ապրիլ-մայիս ամիսներին, մինչդեռ 2024 թվականի օգոստոսի 30-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության միջև պետական սահմանի սահմանագատման և սահմանային անվտանգության հարցերով հանձնաժողովի ու ԱՀ և ՀՀ միջև պետական սահմանի սահմանագատման պետական հանձնաժողովի համատեղ գործունեության մասին» կանոնակարգում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանու-թյան հարցը որոշելու վերաբերյալ գործով Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի որոշումն ընդունվել է 2024 թ սեպտեմբերի 26-ին, իսկ ԱԺ-ն վավերացրել է 2024 թվականի հոկտեմբերի 23-ին:

14.3) Այսինքն՝ ոչ թե տարածքային փոփոխության հարցերն են քննարկվել սահմանադրական դատարանում, այլ հանձնաժողովի գործունեության շրջանակները: Այդուհանդերձ, այդ սահմանադրական դատարանի որոշումն ուշացած էր, քանի որ բուն սահմանագատումն (ապօրինաբար) իրականացվել էր կես տարի առաջ:

15) Կոնվենցիայի 1-ին հոդվածով նախատեսված է պետության հիմնական պարտականությունը (իրենց իրա-վագործության ներքո գտնվող յուրաքանչյուրի համար ապահովել Կոնվենցիայով սահմանված իրավունքներն ու ազատությունները) ու դրա հետ համակցության մեջ, ինքնաբերաբար ենթադրելի է, որ պահանջվում է արդյու-նավետ պաշտոնական հետաքննության իրականացում (տե՛ս Ասենովը եւ այլք ընդդեմ Բուլղարիայի, 1998 թ. հոկտեմբերի 28, § 102, Չեկոյցներ 1998-VIII, եւ Լաբիտան ընդդեմ Իտալիայի [ՄՊ] [Labita v. Italy [GC]], թիվ 26772/95, § 131, ՄԻԵԴ 2000-IV): Քննություն իրականացնելու պարտականությունը «ոչ թե որեւէ արդյունքի հաս-նելու, այլ միջոցներ ձեռնարկելու պարտականություն է»։ պարտադիր չէ, որ յուրաքանչյուր քննություն լինի հա-ջողված կամ հանգեցնի այնպիսի եզրակացության, որը համընկնում է պահանջ ներկայացրած անձի՝ դեպքերի մասին տված ցուցմունքներին. այնուամենայնիվ, դրա միջոցով սկզբուն-քորեն պետք է հնարավոր լինի պարզել գործի փաստերը եւ, այն դեպքում, երբ պարզվում է, որ պնդումները ճիշտ էին, ապա նաեւ բացահայտել եւ, հիմնավորված լինելու դեպքում, պատժել պատասխանատու անձանց: Քննության անկախությամբ ենթադրվում է ոչ միայն ենթակայության կամ ինստիտուցիոնալ կապի բացակայություն, այլ նաեւ գործնական իմաստով անկախություն (տե՛ս Օգյուրն ընդդեմ Թուրքիայի [ՄՊ] [Oğur v. Tur-key] [GC], թիվ 21594/93, § 91, ՄԻԵԴ 1999-III, Մեհմեթ Էմին Յուկսելն ընդդեմ Թուրքիայի [Mehmet Emin Yüksel v. Turkey], թիվ 40154/98, § 37:

15.1) Այն, որ ՀՀ դատարանների նկատմամբ Հայաստանի վարչապետի աթոռը զբաղեցրած անձն ունի անմիջական ազդեցություն, Եւրոպական դատարանին հայտնի է Ալվինա Գյուլումյանը և այլք ընդդեմ Հայաստանի գանգատ թիվ 25240/20 գործով, որտեղ նշված է, որ «2019 թվականի մայիսի 19-ին Հայաստանի վարչապետը խստորեն դատապարտեց դատարաններին և իր աջակիցների միջոցով շրջափակեց դատարանի շենքերը և կոչ արեց վերափոխել դատական համակարգը: Դրանից հետո նա իր համար անընդունելի դատավորներին համարեց «վնասատու» ու սկսեց կամաց-կամաց ազատվել նրանցից»: Այս պայմաններում խոսել անկախ դատական համակարգի մասին, ծիծաղելի է, առավել ևս, երբ 300 առաջ Լյուդովիկոս 14-րդի կողմից ասված խոսքերը՝ Պետությունը ես եմ (L'État c'est moi), կրկնվում են այսօր, և բոլորը, ովքեր հակադրվում են դրան, լավագույնը՝ զրկվում են աշխատանքից (եթե ոչ՝ նրանց հետ տեղի են ունենում անցանկալի դեպքեր),

Ուշադրություն՝ ն. այստեղ լրացվող տեղեկատվության շարադրանքը չպետք է գերազանցի հատկացված բաժնի սահմանները:

F. Կոնվենցիայի և/կամ Արձանագրությունների ենթադրյալ խախտումը (խախտումները) և համապատասխան փաստարկները	Պարզաբանում
<p>61. Հոդվածը, որի վրա հիմնվում եք՝ ՄԻևՀԱ Կոնվենցիա, Հոդված 1. Մարդու իրավունքները հարգելու պարտականությունը ՄԻևՀԱ Կոնվենցիա, Հոդված 6. Արդար դատաքննության իրավունք ՄԻևՀԱ Կոնվենցիա, Հոդված 13. Իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք ՄԻևՀԱ Կոնվենցիա, Հոդված 34. Անհատական գանգատները</p>	<p>Բարձր պայմանավորվող կողմերն իրենց իրավագործության ներքո գտնվող յուրաքանչյուրի համար ապահովում են այն իրավունքներն ու ազատությունները, որոնք սահմանված են սույն Կոնվենցիայի I բաժնում:</p> <p>1. Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:</p> <p>Յուրաքանչյուր ոք, ում սույն Կոնվենցիայով ամրագրված իրավունքներն ու ազատությունները խախտվում են, ունի պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք, նույնիսկ եթե խախտումը կատարել են ի պաշտոնե գործող անձինք:</p> <p>Դատարանը կարող է գանգատներ ընդունել ցանկացած անձից, հասարակական կազմակերպությունից կամ անձանց խմբից, որոնք պնդում են, թե դարձել են սույն Կոնվենցիայով կամ նրան կից Արձանագրություններով ճանաչված իրենց իրավունքների՝ որևէ Բարձր պայմանավորվող կողմի թույլ տված խախտման զոհ: Բարձր պայմանավորվող կողմերը պարտավորվում են որևէ կերպ չխոչընդոտել այդ իրավունքի արդյունավետ իրականացմանը:</p>
<p>ՄԻևՀԱ Կոնվենցիա, Հոդված 35. Ընդունելիության պայմանները</p>	<p>Դատարանը կարող է գործը քննության ընդունել միայն այն բանից հետո, երբ սպառվել են միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերին համապատասխան իրավական պաշտպանության բոլոր ներպետական միջոցները, և չորս ամսվա ընթացքում՝ սկսած այն օրվանից, երբ կայացվել է ներպետական վերջնական որոշումը: 4. Դատարանը մերժում է իրեն հանձնված ցանկացած գանգատ, որն անընդունելի է համարում սույն հոդվածին համապատասխան:</p> <p>Դատարանը կարող է դա անել քննության ցանկացած փուլում:</p>
<p>ՀՀ Սահմանադրություն, Հոդված 3. Մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները</p>	<p>1. Հայաստանի Հանրապետությունում մարդը բարձրագույն արժեք է: Մարդու անօտարելի արժանապատվությունն իր իրավունքների և ազատությունների անքակտելի հիմքն է: 3. Հանրային իշխանությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք:</p>
<p>ՀՀ Սահմանադրություն, Հոդված 60</p>	<p>1. Յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք:</p>
<p>ՀՀ Սահմանադրություն, Հոդված 61. Դատական պաշտպանության իրավունքը և մարդու իրավունքների պաշտպանության միջազգային մարմիններ դիմելու իրավունքը</p>	<p>4. Ոչ ոք չի կարող զրկվել սեփականությունից, բացառությամբ դատական կարգով՝ օրենքով սահմանված դեպքերի:</p> <p>1. Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:</p> <p>2. Յուրաքանչյուր ոք, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան, ունի իր իրավունքների և ազատությունների պաշտպանության խնդրով մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության միջազգային մարմիններ դիմելու իրավունք:</p>
<p>ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, Հոդված 173. Քրեական վարույթ նախաձեռնելու պարտականությունը</p>	<p>1. Քննիչն իր իրավասության սահմաններում պարտավոր է քրեական վարույթ նախաձեռնել, եթե առերևույթ հանցանքի մասին պատշաճ հաղորդումը ստացվել է՝</p>
<p></p>	<p>1) ֆիզիկական անձից.</p> <p>2. Համապատասխան հաղորդումը համարվում է առերևույթ հանցանքի մասին, եթե դրանով փաստվում է այնպիսի դեպք կամ գործողություն կամ անգործություն, որին ողջամտորեն կարող է տրվել Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված որևէ արարքին համապատասխանելու նախնական իրավական գնահատական:</p> <p>4. Զանգվածային լրատվության միջոցներում առերևույթ հանցանքի մասին</p>

Կոնվենցիայի և/կամ Արձանագրությունների ենթադրյալ խախտումը (խախտումները) և համապատասխան փաստարկները (շարունակություն)

<p>62. Հոդվածը, որի վրա հիմնվում եք</p>	<p>Պարզաբանում -Սույն դիմումով հաստատում եմ, որ Հայաստանում արդյունավետ դատական պաշտպանության հնարավորություն չեմ ունեցել, թեպետ պետությունը Սահմանադրության ու Կոնվենցիայի ուժով պարտավոր էր ապահովելու իմ իրավունքներն ու օրինական շահերը: Քրեական վարույթ չնախաձեռնելու հիմքերը ձևական են, և դա ես ապացուցել եմ իմ բոլոր բողոքներով: Սույն դիմումը չեմ ուզում ծանրաբեռնել այդ ապացույցներով, քանի որ կից ներկայացվող բողոքներում դրանք արձանագրված են: Եթե, նույնիսկ, իմ ներկայացրած հանգամանքները բավարար չէին քրեական վարույթ նախաձեռնելու համար, ապա դատախազությունն ու դատարանները պարտավոր էին հաշվի առնել զանգվածային լրատվամիջոցներով ներկայացված փաստերը, էլ չասեմ, որ որոշում կայացնող պաշտոնատար անձանց աչքերի առաջ են տեղի ունեցել վերոգրյալ օրինախախտումները: Ոսկեպարի ու Կիրանցի տարածքների հանձնումը փաստ էր, և դա չէին կարող չտեսնել քննիչը, դատախազները կամ դատավորները: Ավելին, այդտեղ գտնվող ոստիկանական ուժերի հետ եղել են բախումներ ու քրեական վարույթներ են նախաձեռնվել: Դե, իսկ Վճռաբեկ դատարանը հաշվի չի առել երկրում տիրող իրավիճակը և հաստատել է անարդարացի դատական ակտերի «օրինականությունը»: Ուստի, պահպանելով Կոնվենցիայի 34 և 35 հոդվածների պահանջները՝ դիմում եմ Եւրոպական դատարանին՝ իմ (և Հայաստանի բազմահազար քաղաքացիների) նկատմամբ իրավունքի խախտումը արձանագրելու խնդրանքով: - Եւրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ դատարանի մատչելիության իրավունքն արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ մասն է: Այնուամենայնիվ, այդ իրավունքը բացարձակ չէ և կարող է ենթարկվել սահմանափակումների: Այդ սահմանափակումները թույլատրվում են, քանի որ մատչելիության իրավունքն իր բնույթով պահանջում է պետության կողմից որոշակի կարգավորումներ: Այս առումով պետությունը որոշակի հայեցողական լիազորություն ունի: Դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը պետք է իրականացվի այնպես, որ այն չխախտի կամ զրկի անձին մատչելիության իրավունքից այնպես կամ այն աստիճան, որ խախտվի այդ իրավունքի բուն էությունը: Դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը չի կարող համատեղելի լինել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի հետ, եթե այն իրավաչափ նպատակ չհետապնդի և եթե չլինի ողջամիտ հարաբերակցություն ձեռնարկվող միջոցների և հետապնդվող նպատակների միջև համաչափության առումով (տե՛ս, Ashingdane v. The United Kingdom գործով Եւրոպական դատարանի 28.05.1985 թվականի վճիռը, կետ 57): Եւրոպական դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել նաև այն մասին, որ կիրառված սահմանափակումները չպետք է այն կերպ կամ այն աստիճանի սահմանափակեն անձի՝ դատարանի մատչելիության իրավունքը, որ վնաս հասցվի այդ իրավունքի բուն էությանը: Բացի այդ, սահմանափակումը Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետին չի համապատասխանի, եթե այն իրավաչափ նպատակ չի հետապնդում և եթե կիրառված միջոցների և հետապնդվող նպատակի միջև չկա համաչափության ողջամիտ հարաբերակցություն (տե՛ս, օրինակ, Khalfaoui v. France գործով Եւրոպական դատարանի 14.12.1999 թ. վճիռը, կետեր 35, 36, Papon v. France գործով Եվրոպական դատարանի 25.07.2002 թվականի վճիռը, կետ 90): Ըստ Եվրոպական դատարանի՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված իրավունքը չի ներառում վերաքննության իրավունքը: Սակայն եթե վերաքննիչ ու վճռաբեկ դատարաններ գոյություն ունեն, ապա 6-րդ հոդվածի երաշխիքները պետք է տրամադրվեն (տե՛ս, օրինակ, Staroszczyk v. Poland գործով Եվրոպական դատարանի 22.03.2007 թվականի վճիռը, կետ 125): Կոնվենցիայի 35-րդ հոդվածից բխում է, որ իրավական պաշտպանության հասանելի եւ բավարար միջոցների գոյությունը պետք է ոչ միայն տեսականորեն, այլ</p>
---	---

Ուշադրություն՝ ն. այստեղ լրացվող տեղեկատվության շարադրանքը չպետք է գերազանցի հատկացված բաժնի սահմանները:

G. Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված ընդունելիության պայմանները բավարարելու վերաբերյալ տեղեկատվությունը

Յուրաքանչյուր գանգատի համար խնդրում ենք հավաստել, որ սպառել եք տվյալ պետությունում առկա իրավական պաշտպանության բոլոր արդյունավետ միջոցները՝ ներառյալ որոշումների բողոքարկումները, ինչպես նաև նշել տվյալ գանգատով ներպետական մակարդակում վերջնական որոշման ընդունման և հանձնման ամսաթիվը, որպեսզի ապացուցեք, որ պահպանել եք դիմում ներկայացնելու համար սահմանված չէ՛ք Տեղեկատվություն՝ սպառած իրավական պաշտպանության միջոցների մասին, և վերջնական որոշման ամսաթիվը 63. Գանգատը

16) Իրսողը սվանիել Ը ԸԸ օրԵստղրոթյաԲ սառոսսսԿաՑ դատսԿսս սԿաշոտԿա- նոթյան միջոցները. Տավոշի մարգային քննչական վարչություն, Տավոշի մարզի դատախազություն, Տավոշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան, ՀՀ վերաքննիչ քրեական դատարան և ՀՀ վճռաբեկ դատարան:

Վճռաբեկ դատարանը դատական ակտը կայացրել է 2025թ. նոյեմբերի 17-ին: Բոլոր մարմիններն ու ատյաններն իմ բողոքը մերժել են:

17) Բացի այն, որ ՀՀ դատարաններն ու իրավապահ մարմինները խախտել են ՀՀ օրենսդրությունն ու միջազգային իրավական նորմերը, նրանք, նույնիսկ, իրենց որոշումներն են ուշացրած կայացրել և ժամկետանց ուղարկել: Դիցուք՝ հաղորդումը ներկայացրել եմ 27.11.2024թ., քննիչի գրությունը ստացել եմ մոտ մեկ ամիս անց՝ 20.12.2024թ.: Բողոքն առաջին ատյանի դատարան ներկայացրել եմ 15.01.2025թ., դատարանն այն վարույթ է ընդունել 06.02.2025թ., դատական ակտը կայացրել է 21.02.2025թ., իսկ որոշումն ուղարկել է 4 ամիս անց, և ես այն ստացել եմ 01.7.2025թ.: Վերաքննիչ դատարան բողոք եմ ներկայացրել 10.07.2025թ., որոշումը ստացել եմ 11.09.2025թ.: Վերաքննիչ դատարանի որոշումը 25.11.2025թ. բողոքարկել եմ ՀՀ վճռաբեկ դատարան, իսկ մերժման որոշումը ստացել եմ 28.11.2025թ.:

17.1) Այսինքն՝ ժամկետների առումով խախտվել են դատավարական նորմերը: Այսպես. Թեպետ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 179 հոդ. չի նախատեսում, թե քննիչը ի՞նչ ժամկետում քրեական վարույթ նախաձեռնելու մասին արձանագրություն չի կազմում, սակայն հսկող դատախազի համար սահմանում է 24 ժամվա ժամկետ, որի ընթացքում, հսկող դատախազը հաստատում է այն կամ հանձնարարում է քննիչին նախաձեռնել քրեական վարույթ և սկսել նախաքննություն: Մեր դեպքում դա տևել է մոտ մեկ ամիս:

18) ՀՀ քր.դատ.օր.302 հոդ. համաձայն մինչդատական ակտի վերաբերյալ բո- դոքն ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում դատարանը կայացնում է մինչդա-տական ակտը վիճարկելու վարույթ հարուցելու մասին որոշում, որում նշվում է այն գրավոր, իսկ սույն օրենսգրքի 264-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված դեպքում՝ բանավոր ընթացակարգով իրականացնելու մասին: Բանավոր ընթացակարգով վարույթ իրականացնելու դեպքում որոշման մեջ նշվում են դատական նիստն անցկացնելու վայրը, տարին, ամիսը, օրը և ժամը: Դատական նիստը նշանակվում է վարույթը հարուցելուց հետո՝ յոթ օրվա ընթացքում:

18.1) Այսինքն՝ բողոքը գրավոր ընթացակարգով իրականացնելու դեպքում, ամենաուշը 10 օրվա ընթացքում պետք է կայացվի որոշում և անհապաղ ուղարկվի բողոք բերած անձին: Մեր դեպքում այն տևել է 6 ամիս:

19) ՀՀ քր.դատ.օր. 391 հոդ. 4-րդ մասի համաձայն. հատուկ վերանայման բողոքի կապակցությամբ վերաքննիչ դատարանը որոշում է կայացնում վարույթի նյութերն ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում, իսկ հատուկ վերանայման վարույթն իրականացվում և ավարտվում է բողոքը վարույթ ընդունելուց հետո հնգօրյա ժամկետում (ՀՀ քր.դատ.օր. 392 հոդ. 1-ին մաս): Այն օրինական ուժի մեջ է գրավոր ընթացակարգով վարույթի կայացման օրը և դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո՝ ոչ ուշ, քան երեք օրվա ընթացքում ուղարկվում վարույթի մասնակիցներին (ՀՀ քր.դատ.օր. 393 հոդ. 2-րդ մաս): Մեր դեպքում այն տևել է 2 ամիս:

20) Այս անօրինականությունների վերաբերյալ նույնպես նշել եմ իմ վճռաբեկ բողոքում, սակայն Վճռաբեկ դատարանը դրանց նույնպես չի անդրադարձել:

21) Այսպիսով՝ Վճռաբեկ դատարանը՝ որպես դատական բարձրագույն ատյան, եղել է աչառու, իր որոշումը կայացրել է՝ ելնելով քաղաքական իշխանությանը (հակառակսկերտ քննիչի և կապառել անարդարացի բարձրական ակտ):

Ուշադրություն՝ ն. այստեղ լրացվող տեղեկատվության շարադրանքը չպետք է գերազանցի հատկացված բաժնի սահմանները:

